

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՕՀԱՆՅԱՆ ՀՐԱՆՏ ՈՒՒԴԻԿԻ

**ՍԻՄԵՈՆ ԵՐԵՎԱՆՑՈՒ «ԶԱՄԲՈ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ XVІІ-XVІІІ
ԴԱՐԵՐԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԵՆԱՂԲՅՈՒՐ**

Է.00.05 Պատմագրություն, աղբյուրագիտություն մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի
գիտահետազոտական ինստիտուտ Մատենադարանում:

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Մաթևոսյան Կ.Ա.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Մարգարյան Հ.Գ.

պատմական գիտությունների թեկնածու
Մալոյան Ա.Մ.

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թ. դեկտեմբերի 23-ին,
Ժամը 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի Հայոց
պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան,
Մարշալ Բաղդամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. նոյեմբերի 23-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

XVII-XVIII դարերի հայոց պատմության բազմաթիվ հարցերի և այդ ժամանակաշրջանում գրված պատմական երկերի աղբյուրագիտական ուսումնասիրությունը հայ պատմագիտության կարևոր հիմնախնդիրներից մեկն է: Այդ ժամանակաշրջանը բնութագրվում է որպես հայ միջնադարյան պատմագրության վերջին փուլ և վերելքի շրջան¹:

Հիշյալ շրջանի պատմական տարբեր խնդիրների ուսումնասիրման տեսանկյունից կարևոր սկզբնաղբյուր է XVIII դ. հայ մատենագրության ականավոր ներկայացուցիչ Սիմեոն Ա Երևանցի (ծն. 1710 թ., կաթողիկոս՝ 1763-1780 թթ.) կաթողիկոսի «Ջամբռ» երկը: Նրա գործունեության շրջանը համընկնում է տարածաշրջանում ուժերի հարաբերակցության փոփոխման իրողության հետ: Մասնավորապես շահական Պարսկաստանում իշխանության թուլացումը հանգեցնում է տեղի մահմեդական իշխողների կիսանկախ գործունեությանը և Օսմանյան կայսրության ներթափանցման փորձերին: Մյուս կողմից՝ Ռուսական կայսրությունը փորձեր է կատարում ավելի ակտիվ ներգրավվել տարածաշրջանի գործընթացներում, որտեղ 1762 թ.-ին Քարթլիի և Կախեթի թագավորությունների միավորումից հետո զորեղ ուժ է դառնում նաև վրացական պետությունը: Այս պայմաններում է, որ Էջմիածնի կաթողիկոս է ընտրվում Սիմեոն Ա Երևանցին և հոգևոր-եկեղեցականի հետ միասին ծավալում ակտիվ քաղաքական, տնտեսական, մշակութային և լուսավորչական գործունեություն:

Սիմեոն Երևանցու «Ջամբռ»-ը հայ պատմագրության մեջ իր բնույթով բացառիկ մի գործ է, որոշակի ծրագրով կազմված պատմական և դիվանական նյութերի յուրահատուկ ժողովածու: Բազմաթիվ աղբյուրների հարուստ հենքով ներկայացված այդ տեղեկությունները XVII-XVIII դդ. հայոց պատմության կարևոր սկզբնաղբյուր են: Այս երկը նպատակ է հետապնդել հիմնավորել և ամրապնդել Էջմիածնի կաթողիկոսության կարգավիճակը՝ հակադարձելու և պաշտպանելու այն որևէ ունեցությունից:

Սիմեոն Երևանցին Ս. Էջմիածինը դիտարկել է որպես հայ ժողովրդի միասնականության փարոս: Տվյալ ժամանակաշրջանի պատմական և քաղաքական անցքերն այս կամ այն կերպ մեծապես առնչվել են հայոց եկեղեցու հետ: Հետևաբար՝ XVII-XVIII դդ. հայոց պատմության տարաբնույթ հարցերի ուսումնասիրման ժամանակ հնարավոր չէ շրջանցել ո՛չ Ս. Էջմիածինը, ո՛չ էլ Սիմեոն Երևանցու «Ջամբռ» աշխատությունը: Այն հավաքական մի շտեմարան է՝

¹ Տե՛ս Մարգարեան Հ., Միջնադարեան հայ պատմագրութեան բնութագրական գծերը եւ պարբերացումը, *Հանդես ամսօրեայ*, 2014, 1-12, էջ 308:

պատմական, աշխարհագրական, սոցիալ-տնտեսական, վիճակագրական, փաստագրական հարուստ նյութերով, որոնց ուսումնասիրումն արդիական է հայ պատմագիտության համար: Հայաստանի բազմաթիվ բնակավայրերի վերաբերյալ «Ջամբ»-ում եղած պատմական, վիճակագրական հարուստ տեղեկությունները մեծապես կարևորում են այս երկը նաև արդի իրողությունների տեսանկյունից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Նպատակ ունենալով ներկայացնել «Ջամբ»-ը որպես XVII-XVIII դդ. հայոց պատմության սկզբնաղբյուր՝ նրա նյութերը համադրել ենք այլ աղբյուրների հաղորդած տեղեկությունների հետ՝ ապահովելու համար պատմական փաստերի անաչառ և բազմակողմանի քննությունը: Այս տեսանկյունից կարևոր է նաև Սիմեոն Երևանցու հեղինակած մատենագրական հարուստ ժառանգությունը, որը լրացնում է «Ջամբ»-ի աղբյուրագիտական տեղեկությունները:

Ատենախոսության կարևոր խնդիրներից ենք համարել «Ջամբ»-ի հաղորդած աղբյուրագիտական տեղեկությունների առավել ընդգրկուն և համակողմանի քննությունը, որը հնարավորություն է տալիս այս երկի գիտական կարևորության առավել արժևորմանը:

Մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- Անդրադառնալ Սիմեոն Երևանցու գործունեության կարևոր դրվագներին, ի մի բերել նրա մատենագրական ժառանգությունը:
- Պարզաբանել և ճշգրտել «Ջամբ»-ի ստեղծման հանգամանքները, ժամանակագրական սահմանները և լրացումների խնդիրը:
- Բացահայտել «Ջամբ»-ի աղբյուրները, քննել հեղինակի օգտագործած աղբյուրները:
- Անդրադառնալ «Ջամբ»-ի ձեռագրերին, վերլուծել բնագրի կառուցվածքային առանձնահատկությունները, ներկայացնել ձեռագրերի և հրատարակության մեջ նկատված բացթողումները:
- «Ջամբ»-ի հաղորդած սկզբնաղբյուրային տեղեկությունների հիման վրա քննել Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսի ժամանակաշրջանի մշակութային, լուսավորչական, շինարարական և տնտեսական խնդիրները:
- Պարզաբանել և ցույց տալ «Ջամբ»-ի աղբյուրագիտական նշանակությունը՝ էջմիածնի կաթողիկոսության արտաքին հարաբերությունների տեսանկյունից՝ այն է՝ փոխհարաբերությունների հաստատում Ռուսական կայսրության հետ, կաթողիկոսության հետ առնչվող հիմնախնդիրները, Գանձասարի, Աղթամարի և Սսի կաթողիկոսությունների հետ փոխհարաբերությունների ընթացքը:

Ատենախոսության շրջանակներում զերծ ենք մնացել Սիմեոն Երևանցու գործունեության մի շարք դրվագների՝ այդ թվում նաև հայ ազատագրական պայքարին առնչվող խնդիրներին անդրադառնալուց, քանի որ դրանց մասին «Ջամբ»-ում տեղեկություններ չկան:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ: Ատենախոսությունը շարադրված է տարաբնույթ սկզբնաղբյուրների և թեմային վերաբերող մասնագիտական գրականության հիման վրա՝ պատմաքննական, պատմահամեմատական մեթոդներով և համադրական վերլուծությամբ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ: Ատենախոսության ժամանակագրական սահմանները ընդգրկում են XVII-XVIII դարերը, որը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Թեև Սիմեոն Երևանցին «Ջամբռ»-ում տեղեկություններ է հաղորդում Հայաստանում քրիստոնեության ընդունման, իրեն նախորդած Ամենայն Հայոց կաթողիկոսների և Հայաստանի պատմական անցյալի վերաբերյալ, այդուհանդերձ, դրանք մեծամասամբ քաղագրական բնույթ են կրում: Այլ է իրադրությունը XVII դարից սկսած, երբ հեղինակը ոչ միայն մանրամասն և հանգամանալից է ներկայացնում պատմական իրողությունները, այլև իր ձեռքի տակ է ունեցնել օտարալեզու բազմաթիվ արխիվային վավերագրեր, որոնք ավելի են արժևորում «Ջամբռ»-ի հաղորդած տեղեկությունները: Միևնույն ժամանակ՝ նշված ժամանակաշրջանի համար զգալի արժեք են ներկայացնում նաև էջմիածնի արխիվային նյութերը: Այդպիսով՝ Սիմեոն Երևանցու հաղորդումները XVII-XVIII դդ. հայոց պատմության ուսումնասիրման տեսանկյունից առավել ինքնուրույն, ընդգրկուն և արժեքավոր են:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Հայագիտության մեջ թեպետ Սիմեոն Երևանցու անձի և գործունեության վերաբերյալ բազմաթիվ անդադարձներ կան, սակայն «Ջամբռ»-ի վերաբերյալ առանձին և համապարփակ ուսումնասիրություն չի կատարվել և այն բազմակողմանի ու հանգամանալից քննության չի ենթարկվել, թեև՝ կարևոր սկզբնաղբյուր է հանդիսացել մի շարք հետազոտողների համար: Շատ դեպքերում ուսումնասիրողները չեն փորձել քննության ենթարկել «Ջամբռ»-ի հաղորդած տեղեկությունները՝ ինչն իր հերթին տվյալների արժանահավատության խնդրում հանգեցրել է որոշ անճշտությունների և հակասական պատկերացումների:

Ատենախոսության մեջ ի մի են բերվել Սիմեոն Երևանցու կենսագրությանը վերաբերող տեղեկությունները, ներկայացվել է նրա մատենագրության ամբողջական վերլուծությունը: «Ջամբռ»-ի տվյալների աղբյուրագիտական հետազոտության հիման վրա փորձ ենք արել ի հայտ բերել և քննության ենթարկել «Ջամբռ»-ի ձեռագրերում առկա բացթողումները, վրիպակներն ու անճշտությունները: «Ջամբռ»-ի, ինչպես նաև՝ ձեռագրական այլ նյութերի, արխիվային վավերագրերի, վիմագրերի, տպագիր սկզբնաղբյուրների և մասնագիտական գրականության հիման վրա քննության են առնվել նաև այդ ժամանակաշրջանի հայոց պատմության կարևոր հարցերը, ինչպես օրինակ՝ Սիմեոն Երևանցու գործունեությունը, Ռուսական կայսրության հետ փոխհարաբերությունների հաստատումը, կաթոլիկության հետ կապված

խնդիրները, էջմիածնի և հայոց մյուս կաթողիկոսությունների փոխհարաբերությունների պատմությունը: Կատարվել է «Ջամբո»-ում եղած տեղեկությունների պատմաքննական և համադրական վերլուծություն:

Կատարված աշխատանքի արդյունքում հանգել ենք եզրակացությունների, որոնք կարող են լրացնել XVII-XVIII դարերի հայոց պատմության որոշ խնդիրների վերաբերյալ առկա պատկերացումները, իսկ մեր կատարած ճշգրտումները և լրացումները կարող են օգտակար լինել «Ջամբո»-ի քննական բնագրի կազմման ժամանակ: Առավել ևս, որ «Ջամբո»-ի ձեռագրերից գտնվել են հրատարակությունից դուրս մնացած որոշ փոքր հատվածներ:

Ատենախոսության արդյունքները կարող են նաև օգտագործվել հայոց պատմության, պատմագրության և աղբյուրագիտության, Հայոց եկեղեցու պատմության համապատասխան դասընթացներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ Մատենադարանի միջին դարերի սկզբնաղբյուրների ուսումնասիրման բաժնի կողմից: Ուսումնասիրության հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած հոդվածներում:

ԹԵՄԱՅԻ ՌԻՍՈՒՄԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍԽԻՃԱՆԸ (ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ): Ատենախոսությունը շարադրված է Մատենադարանում առկա ձեռագրական նյութի, արխիվային վավերագրերի, վիմագրերի, հրապարակված սկզբնաղբյուրների և թեմային վերաբերող մենագրությունների և հոդվածների հիման վրա:

Սիմեոն Երևանցու անձը՝ որպես Ամենայն Հայոց կաթողիկոսի, մշտապես եղել է հայ հեղինակների ուշադրության կենտրոնում: Կաթողիկոսը ծավալել է բեղուն լուսավորչական, ստեղծագործական գործունեություն և ունեցել է բազմաթիվ հայտնի աշակերտներ, որոնք հիշատակություններ են թողել նրա մասին:

Սիմեոն Երևանցուն և նրա «Ջամբո» աշխատությանը անդրադարձել են մի շարք հետազոտողներ, որոնցից պետք է առանձնացնել Գ. Աղանյանի «Դիան հայոց պատմութեան» աշխատությունը²: Հեղինակը ձեռնամուխ է եղել մի այնպիսի ծավալուն և աշխատատար գործի, ինչպիսին է՝ Սիմեոն Երևանցու «Հիշատակարանի» հրատարակությունը: Դրան կից՝ Գ. Աղանյանը ներկայացրել

² Դիան հայոց պատմութեան, հրատարակեց Գիտ քահանայ Աղանեանց, Գիրք Գ., Սիմեոն կաթողիկոսի Յիշատակարանը, կենսագրութեամբ եւ յաւելուածներով ու ծանօթութիւններով, Թիֆլիս, 1894, Դիան հայոց պատմութեան, հրատարակեց Գիտ քահանայ Աղանեանց, Գիրք Ը., Սիմեոն կաթողիկոսի Յիշատակարանը, մասն II (1767-76), Յաւելուածներով ու ծանօթութիւններով, Թիֆլիս, 1908, Դիան հայոց պատմութեան, Գիրք ԺԱ., Սիմեոն կաթողիկոսի Յիշատակարանը, մասն III (1777-79), հրատարակեց Գիտ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1913:

է կաթողիկոսի կենսագրությունը: Մեծավաստակ հեղինակի այս գործը Սիմեոն Երևանցու գործունեության ամենատարբեր դրվագների ուսումնասիրման առաջնային աղբյուր է:

Ամենայն Հայոց կաթողիկոսների և հայոց պատմության բազմաթիվ հարցերի վերաբերյալ ծանրակշիռ անդրադարձ է պարունակում Մ. Օրմանյանի «Ազգապատում» աշխատությունը³:

Ատենախոսության շարադրման և որոշ կարևոր եզրահանգումների առումով մեզ համար օգտակար են եղել պատմաբան Լեոյի աշխատությունները⁴, ով Սիմեոն Երևանցուն համարել է «ամենախոշոր անձնավորությունը XVIII դարի հայ լուսավորչական հոգևորականության մեջ»⁵, իսկ նրա «Ջամբո»-ը՝ «Էջմիածնի իրավական դրության հանրագիտարան»⁶:

Սիմեոն Երևանցու «Ջամբո»-ի պատմական սկզբնաղբյուրի ուսումնասիրման ժամանակ օգտվել ենք նաև հայ միջնադարյան պատմագրությունից:

XVII-XVIII դարերի հայոց պատմության տարաբնույթ խնդիրների ուսումնասիրման հարցում մեզ համար առաջնային աղբյուր են հանդիսացել Մատենադարանի արխիվային փաստաթղթերը: Մեծամասամբ անտիպ այդ վավերագրերը Սիմեոն Երևանցու ժամանակաշրջանի բազմաթիվ հարցերի ուսումնասիրման համար փաստագրական հարուստ նյութ են պարունակում:

Ատենախոսության թեմայում արձարծված բազմաթիվ խնդիրներ ներկայացնելիս օգտագործել ենք նաև օտարալեզու վավերագրեր: Ժամանակաշրջանի քաղաքական, տնտեսական և իրավական հարցերն ամփոփված են «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» ժողովածուներում⁸, որտեղ ներկայացված փաստաթղթերն ուղեկցվում են

³ Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, Բ հատոր, Էջմիածին, Երևան, 2001:

⁴ Լեո, Երկերի ժողովածու, երրորդ հատոր, Երևան, 1973, Լեո, Հայկական տպագրութիւն, հատոր երկրորդ, XVIII դար, առաջին մաս, Թիֆլիս, 1902: Լեո, Հայ գրքի տոնը, Թիֆլիս, 1912:

⁵ Լեո, Երկերի ժողովածու, հ.3, էջ 279:

⁶ Նույն տեղում, էջ 280:

⁷ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), Կաթողիկոսական դիվան, թղթ. 1, վավ. 39, 72, 73, թղթ. 3, վավ. 16, թղթ. 5, վավ. 14, 16, թղթ. 4, վավ. 7, 43, թղթ. 5, վավ. 13, 14, 16, թղթ. 240, վավ. 1, 2, 3, 5, 26, 29, թղթ. 243, վավ. 18, թղթ. 1ա, վավ. 57, թղթ. 1դ, վավ. 467, 469, ցուց. 29, թղթ. 3, վավ. 45:

⁸ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Կավածագրեր, պրակ առաջին (ԺԴ-ԺԶ դդ.), կազմեց՝ Հ. Դ. Փափազյան, Երևան, 1968: Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտակներ, պրակ երկրորդ (1601-1650 թթ.), կազմեց՝ Հ. Դ. Փափազյանը, Երևան, 1959: Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտակներ, պրակ երրորդ (1672-1731 թթ.), կազմեց՝ Բ. Պ. Կոստիկյանը, Երևան,

անհրաժեշտ ծանոթագրություններով: Էջմիածնի կաթողիկոսների հաստատման, կաթողիկոսության իրավական և տնտեսական կարգավիճակի, հայոց կաթողիկոսությունների և Արարատյան աշխարհում տնտեսական վիճակի վերաբերյալ բազմաթիվ արժեքավոր վավերագրերի համադրումը «Ջամբո»-ի հաղորդած տվյալների հետ մեծապես լրացնում է ուսումնասիրվող թեմայի աղբյուրագիտական հենքը: Կատարված աշխատանքում օգտվել և լրացումներ ենք արել նաև վրացական աղբյուրներից⁹:

Ատենախոսության բազմաբնույթ հարցերի ուսումնասիրման տեսանկյունից նաև կարևորել ենք Սիմեոն Երևանցու մատենագրական ժառանգության մաս կազմող մի շարք ձեռագրեր, որոնք արժեքավոր և բացառիկ տեղեկություններ են հաղորդում: Դրանց թվում են «Ջամբո»-ի¹⁰, Սիմեոն Երևանցու «Հիշատակարան»-ի ձեռագրերը¹¹, նրա գրչին պատկանող այլ գործերի հիշատակարանները¹², «Օրինակք գրութեանց» ժողովածուները, որոնք պաշտոնական գրագրության կաղապար-օրինակներ են¹³: Աշխատանքը կատարելիս օգտագործել ենք նաև Սիմեոն Երևանցու հրատարակած գրքերի հիշատակարանները, որոնք պարունակում են ժամանակագրական և այլ կարևոր տվյալներ¹⁴:

Արևելյան Հայաստանի և մասնավորապես Էջմիածնի վերաբերող տնտեսական և իրավական հարցերի առնչությամբ օգտագործել ենք Հ. Աբրահամյանի կազմած փաստաթղթերի ժողովածուն¹⁵: Էջմիածնի տնտեսական վիճակի, հարկային համակարգին և վանական տնտեսություններին են անդրադարձել մի շարք հեղինակներ, որոնց աշխատությունները ևս կարևոր են տվյալ խնդիրների ուսումնասիրման տեսանկյունից¹⁶:

2005: Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտականեր, պրակ չորրորդ (1734-1797), կազմեց Ք. Պ. Կոստիկյան, Երևան, 2008:

⁹ Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, քաղվածքներ վրացերեն բնագրից հայերեն թարգմանությամբ, առաջաբանով, ներածություններով և ծանոթագրություններով Մելիքսեթ-Բեկ Լ. Մ., հատոր Գ (ԺԸ-ԺԹ դդ.), Երևան, 1955:

¹⁰ ՄՄ, ձեռ. հմր. 978, 4592:

¹¹ ՄՄ, ձեռ. հմր. 2931, 4479:

¹² ՄՄ, ձեռ. հմր. 1818, 2212, 7788: Մանրամասները՝ ատենախոսության հավելվածում:

¹³ ՄՄ, ձեռ. հմր. 2911, 2912, 9120:

¹⁴ Սիմեոն Երևանցի, Գիրք աղօթից, որ կոչի Զբօսարան հոգեւոր, Էջմիածին, 1772: Տօնացոյց, աշխատասիրութեամբ Սիմեոնի կաթողիկոսի, Հտ. 1-2, Էջմիածին, 1774-1775: Սիմեոն Երևանցի, Կարգ թաղման կարգաւորաց, Էջմիածին, 1777: Գիրք որ կոչի պարտավճար, արարեալ Տեառն Սիմեոնի վշտակոծ և ցավակիր կաթողիկոսի, մեծագործ և յոգնեղախոս Հայրապետի ամենայն Հայոց՝ Երեւանեցոյ, Էջմիածին, 1779-1783:

¹⁵ Կալվաճագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր, պրակ 1, առաջաբանով, ծանոթագրություններով և բառարանով կազմեց՝ Հար. Աբրահամյանը, Երևան, 1941:

¹⁶ Арутюнян В.М., Крупное монастырское хозяйство в Армении в XVII-XVIII в.в., Ереван, 1940, էջ 22-23. Փափազյան Հ., Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական

Պատմական փաստերի ճշգրտված և նոր տեսակետերի ներկայացման առումով ուղենիշ ենք համարել «Հայոց պատմություն» նոր բազմահատորյակը¹⁷:

Սիմեոն Երևանցու մատենագրական հարուստ ժառանգության ուսումնասիրությունը և հնարավորինս ամբողջական ցանկի կազմումը կատարել ենք մեր ձեռքի տակ եղած ձեռագրացուցակների մատենագիտական տվյալների հիման վրա: Դրանք են՝ Մատենադարանի հին և նոր ձեռագրացուցակները, ինչպես նաև հայկական այլ մատենադարանների ու ձեռագրական կենտրոնների ձեռագրացուցակները:

Այսպիսով՝ վերոնշյալ սկզբնաղբյուրները և աշխատությունները կարևոր նպաստ են ունեցել մեր կողմից Սիմեոն Երևանցու գործունեության ժամանակաշրջանի և նրա «Ջամբռ»-ի՝ որպես պատմական սկզբնաղբյուրի ուսումնասիրման և աղբյուրագիտական բարձր արժեքի գնահատության խնդրում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից ու հավելվածից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ հիմնավորված է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ներկայացված է ատենախոսության գիտական նորույթը, հիմնավորված են հետազոտության ժամանակագրական սահմանները, տրված է օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ «ՍԻՄԵՈՆ ԵՐԵՎԱՆՑԻՆ ԵՎ ՆՐԱ «ՋԱՄԲՐ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ», բաղկացած է հինգ ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Սիմեոն Երևանցու կյանքը, գործունեությունը և մատենագրական ժառանգությունը», վեր են հանված Սիմեոն Երևանցու (1710-1780) կյանքի և գործունեության հիմնական դրվագները՝ համադրված «Ջամբռ»-ի հաղորդած տեղեկություններով, ինչը հնարավորություն է տվել որոշ լրացումներ կատարել տվյալ խնդրի վերաբերյալ, մասնավորապես նրա եպիսկոպոս ձեռնադրվելու և հետագա գործունեության հարցում: Ներկայացված է նաև

հարկացուցակները, *Բանբեր Մատենադարանի* N5, Երևան, 1960, էջ 431-464: Ավդալբեգյան Թ., Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969: Մարկոսյան Ս., Իմունիտետի իրավունքը Արարատյան երկրում XVII-XVIII դարերում, Երևան, 1975: Թորոսյան Հ., Էջմիածնի վանական տնտեսությունը XV-XVIII դարերում, Երևան, 2007: Չոբանյան Պ., Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Էջմիածին, 2006:

¹⁷ Հայոց պատմություն, հատոր III, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես-1918 թ.), Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես-XIX դարի վերջ), Երևան, 2010: Հայոց պատմություն, հատոր III, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես-1918 թ.), Գիրք երկրորդ (1901-1918 թթ., հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIX դ. և XX դ. սկզբին), Երևան, 2015

Սիմեոն Երևանցու մատենագրական հարուստ ամբողջական ժառանգությունը, որը փորձել ենք պարբերացնել՝ առանձնացնելով ինքնագիր համարվող և հետագա ընդօրինակությունները: Ըստ այդմ՝ դրանք պայմանականորեն բաժանել ենք խմբերի՝ հաշվի առնելով դրանց բովանդակային բնույթը՝ պատմա-աղբյուրագիտական, տոմարական, հոգևոր, փիլիսոփայական և այլ գործեր:

Սիմեոն Երևանցու գրավոր ժառանգության մի զգալի մասը, այդ թվում՝ ինքնագրերը, իրենց հանգրվանն են գտել Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում: Մեզ են հասել նաև այդ ստեղծագործությունների բազմաթիվ ընդօրինակումներ: Դրանք աղբյուրագիտական բնույթի կարևոր տեղեկություններ են պարունակում նաև Սիմեոն Երևանցու և նրա ընտանիքի անդամների վերաբերյալ:

Երկրորդ ենթագլխում՝ «Ջամբո»-ի ստեղծման հանգամանքները, ժամանակագրական սահմանները և լրացումների խնդիրը», քննվել են երկի ստեղծման հանգամանքները: Առանձին քննության է ենթարկվել «Ջամբո» եզրույթը: Սիմեոն Երևանցու «Ջամբո»-ի ինքնագիր համարվող ձեռագիրը պահվում է Մատենադարանում՝ 978 թվահամարի ներքո: Երկի հեղինակային անվանումն է «Գիրք որ կոչի Յիշատակարան արձանացուցիչ հայելի եւ պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս էջմիածնի եւ իւրոյ շրջակայից վանորէիցն»¹⁸: Այս հանգամանքը չի խանգարել երկի հրատարակիչներին վերցնել միևնույն բնագրի՝ որպես «Առաջաբանի» վերնագիր ծառայող անվանման կրճատ տարբերակը: Պետք է նշել, որ Սիմեոն Երևանցու այս գործը մինչև հրատարակումն արդեն իսկ հայտնի է եղել «Ջամբո» անունով, ինչի մասին է վկայում 1828 թ.-ին երկի վերջին էջերում հավելված ցանկը, որի հեղինակը գրել է՝ «այս մատեան Ջամբո անուանեալ»¹⁹:

Հրատարակության համար նշված կրճատ և առավել ընդունելի «Ջամբո» տարբերակի ստուգաբանությունը Հայկազյան լեզվի բառագիրքը բացատրում է որպես «սենեակ, դիւան»²⁰: «Ջամբո»-ի ստուգաբանումն առկա է նաև Հր. Աճառյանի մոտ, ով այն համարում է փոխառություն ֆրանսերենից՝ «որ է արդի ֆրանս. chambre, անգլ. chamber «սենյակ»²¹: Նույն բացատրությունն է նաև ակադ. Ստ. Մալխասյանի մոտ²²: Ակադ. Աբգար Հովհաննիսյանը ևս «Ջամբո»-ի ստուգաբանումը կապում է ֆրանսերեն chambre բառի հետ՝ հոռմեական պապական արխիվի՝ Camera apostolica-ի նմանությամբ²³:

¹⁸ ՄՄ, ձեռ. հմր. 978, 13ա:

¹⁹ Նույն տեղում, 588ա:

²⁰ Նոր բառագիրք Հայկազեան լեզուի, հատոր երկրորդ, Վենետիկ, 1837, էջ 669:

²¹ Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հատոր Դ, Երևան, 1979, էջ 121:

²² Հայերեն բացատրական բառարան, հատոր չորրորդ (2-Ֆ), կազմեց Ստ. Մալխասեանց, Երևան, 1945, էջ 131: Այլ բացատրություններից են՝ «արքունի դիւանատուն, դիւան»:

²³ St' u Ioannisjan A. P., Иосиф Эмин, Ереван, 1945, էջ 171:

Մինչ օրս մեզանում գրեթե անդրադարձ չի եղել աղբյուրագիտական այս կարևոր երկի ստեղծման հանգամանքներին: Պատմական այն ժամանակաշրջանը, երբ ապրել և ստեղծագործել է Սիմեոն Երևանցին լի էր փորձություններով՝ ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ Մայր Աթոռի համար: Պարսից Նադիր շահի (1736–1747) սպանությունից հետո պարսկական կենտրոնական իշխանության թուլացման պայմաններում մեծանում է տեղական մահմեդական տիրակալների դերը, որոնք հաճախ կամայականորեն էին գործում: Նշված պայմանները բնականաբար այս կամ այն չափով անդրադարձել էին նաև եկեղեցական կառույցների և էջմիածնի կաթողիկոսության վրա: Վերը նշված հանգամանքներն, անշուշտ, կարևոր դեր են ունեցել «Ջամբռ»-ի ստեղծման գործում, որը հեղինակի մտահղացմամբ պետք է հանդիսանար Ս. էջմիածնի իրավական և տնտեսական կարգավիճակի վերաբերյալ «Հիշատակարան»:

Սիմեոն Երևանցին հստակ ծրագրել և նախապես մշակել է իր աշխատության կառուցվածքը, որի մասին նշում է աշխատության առաջաբանում: Ընդ որում՝ նա իր աշխատանքը չի համարել ավարտված՝ նշելով, որ իր կատարած գործը պահպանելով՝ սերունդները պետք է շարունակեն այն՝ «քանզի անցելոցն անցք՝ խրատք և վարդապետութիւնքն են յետնոց»²⁴:

«Ջամբռ»-ի՝ Ամենայն Հայոց կաթողիկոսներին նվիրված հատվածի բնագրում առկա է նաև Սիմեոն Երևանցի կաթողիկոսի վերաբերյալ ընդարձակ մի անդրադարձ²⁵, որտեղ հանգամանալից ներկայացված է հայոց հայրապետի գործունեությունը: «Ջամբռ»-ի այս «հավելումը» տարբեր մեկնաբանությունների տեղիք է տվել խնդրին անդրադարձած հայագետների մոտ՝ հետևաբար կատարել ենք դրա մանրամասն քննությունը: «Դիվան հայոց պատմության»-ը կազմելիս հարցին անդրադարձել է նաև Գյուտ Աղանյանցը՝ գտնելով, որ տվյալ հատվածը չէր կարող գրված լինել հեղինակի կողմից և որ դա բնագրի հրատարակիչներն են ներմուծել «Ջամբռ»-ում²⁶: «Ազգապատում»-ում նույն կարծիքն է արտահայտել նաև Մաղաքիա Օրմանյանը՝ գտնելով, որ Սիմեոն Երևանցուն վերաբերող հատվածը «ուրիշ գրիչ է Ջամբռին մէջ մուծուած է»²⁷: Պետք է նշել, սակայն, որ համեմատելով բնագրի վերոհիշյալ հատվածը «Ջամբռ»-ի այլ հատվածների հետ՝ հանգել ենք այն եզրակացության, որ դրանք միևնույն գրչին են պատկանում: Դրանից զատ՝ մյուս կաթողիկոսներին վերաբերող հատվածներում ևս, կան բովանդակային և կառուցվածքային նմանություններ, ինչը հիմք է տալիս հանգելու այն եզրակացության, որ նշյալ հատվածը գրվել է նույն գրչի կողմից: Առավել ևս, որ Սիմեոն Երևանցու

²⁴ Ջամբռ, գիրք, որ կոչի յիշատակարան..., Վաղարշապատ, 1873, էջ 5:

²⁵ Տե՛ս ՄՄ, ձեռ. հմր. 978, 27ա-31բ:

²⁶ Տե՛ս Դիան հայոց պատմութեան, Գիրք Գ., էջ ՃՀԲ:

²⁷ Օրմանեան Մ., Ազգապատում, էջ 3503:

գործունեությունը ներկայացնող այդ հատվածը որոշակի տարբերություններով առկա է նաև «Ջամբռ»-ի հեղինակի ինքնագիր-սևագիրը համարվող Մատենադարանի հմր. 4592 անտիպ ձեռագրում²⁸: Դրանով իսկ կարելի է հերքել այն հեղինակների տեսակետը, ովքեր տվյալ հատվածի հավելումը համարում են հետագայի գործ կամ վերագրում այլ հեղինակների:

Ինչպես գիտենք, «Ջամբռ»-ը թվագրված է 1765 թվականով, որը, սակայն, պետք է դիտարկել միայն որպես այս երկի շարադրանքը սկսելու տարեթիվ, քանի որ այն ժամանակի ընթացքում շարունակվել և լրացվել է: Վերլուծելով «Ջամբռ»-ի ինքնագիր համարվող Մատենադարանի հմր. 978 ձեռագրում առկա այն «լրացումները», որոնք թվագրված են մինչև 1775 թ.-ը, բնագրի այլ հատվածների հետ՝ ակնհայտ է դառնում, որ դրանք միևնույն գրչի ձեռքին են պատկանում՝ թե՛ բովանդակային, թե՛ կառուցվածքային նմանություններով: Հետևաբար՝ կարող ենք փաստել, որ «Ջամբռ»-ի ստեղծման ժամանակը կարելի է դիտարկել 1765-1775 թվականները:

Երրորդ ենթագլխում՝ «Ջամբռ»-ի աղբյուրները, բացահայտված են երկի աղբյուրները, որոնք առանձնանում են իրենց բազմազանությամբ՝ ինչպես ծագման, այնպես էլ քանակական և բովանդակային առումով: «Ջամբռ»-ում պատմական իրադարձությունները ներկայացնելիս՝ Սիմեոն Երևանցին մեծապես օգտվել է հայ միջնադարյան պատմագրությունից: Սիմեոն Երևանցու համար կարևոր սկզբնաղբյուր են հանդիսացել Ագաթանգեղոսի, Մովսես Կաղանկատվացու, Ուսատենս Եպիսկոպոսի, Անանիա Մոկացու, Մատթեոս Ուռհայեցու, Կիրակոս Գանձակեցու, Թովմա Մեծոփացու, Առաքել Դավրիժեցու, Զաքարիա Քանաքեռցու երկերը:

Սիմեոն Երևանցու «Ջամբռ»-ը հիրավի կարելի է բնութագրել որպես «արխիվային վավերագրերի շտեմարան»: Այն, որ հեղինակն իր առջև խնդիր է դրել հայթայթել, համախմբել և կանոնակարգել Ս. Էջմիածնին և այլ վանքերին վերաբերող բազմաթիվ հրովարտականեր, հրամանագրեր, կալվածագրեր, այլ պաշտոնական թղթեր՝ ինքնին բնորոշում է նրա նպատակադրումը՝ աշխատանքի արժանահավատության ապահովման առումով: Ավելորդ չենք համարում նաև նշել, որ փաստորեն Սիմեոն Երևանցին Էջմիածնի արխիվում գտնվող կամ պահվող օտարալեզու վավերագրերի առաջին ուսումնասիրողն է:

Սիմեոն Երևանցու համար Ս. Էջմիածնի և այլ վանքերի, Մայր Աթոռի ունեցվածքի, վանական տնտեսություններին վերաբերող որպես առաջնային աղբյուր են ծառայել արխիվային վավերագրերը: Դրանք պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օտար տիրապետողներից ստացած հրովարտականեր, կալվածագրեր ու այլ փաստաթղթեր և հայերեն լեզվով կոնդակներ, կալվածագրեր, հաշիվներ և այլն: Տվյալ վավերագրերի միայն մի փոքր մասն է այսօր համեմատելի Մատենադարանում պահվող

²⁸ Տե՛ս ՄՄ, ձեռ. հմր. 4592, 35բ-38բ:

Կաթողիկոսական դիվանի համապատասխան ֆոնդերի հետ: Հետևաբար՝ «Ջամբռ»-ը այն եզակի աղբյուրն է, որի միջոցով մենք պատկերացում ենք կազմում այդ փաստաթղթերի մասին:

Չորրորդ ենթագլխում՝ «Ջամբռ»-ի ձեռագրերը, բնագրի կառուցվածքային առանձնահատկությունները, լեզուն, քննության են առնված Մատենադարանում պահվող «Ջամբռ»-ի ձեռագրերը: Հմր. 978 «Ջամբռ»-ի հեղինակային ձեռագիրն աչքի է ընկնում իր կառուցվածքային յուրահատկություններով: Հեղինակը ծրագրել է, որ իր մատյանը հետագա լրացումներ է ունենալու, այդ նպատակով էլ ձեռագրի կառուցվածքն այնպիսին է (այն ունի հարյուրավոր դատարկ, բայց համարակալված էջեր), որ հնարավորություն է տալիս կատարել հավելումներ, որոնք որևէ կերպ չեն խախտում տեքստի ամբողջականությունը և շարունակականությունը: «Ջամբռ»-ի բնագիրը բաղկացած է առաջաբանից և 25 գլուխներից:

«Ջամբռ»-ի մյուս՝ հմր. 4592 ձեռագիրը, ըստ երևույթին, Սիմեոն Երևանցու համար հանդիսացել է սոսկ որպես սևագիր, որտեղ գրի առնված տեղեկությունները հետո ներմուծվել են «Ջամբռ»-ում: Պետք է նշել, որ այս սևագրային օրինակը նույնական չէ հմր. 978 ձեռագրին, այսինքն այն «Ջամբռ»-ի (ձեռ. հմր. 978) ամբողջական սևագիր օրինակը չէ: Հմր. 4592 ձեռագիրը սկսվում է միայն Վաղարշապատի և Ս. Էջմիածնին պատկանող այլ գյուղերի վերաբերյալ նկարագրություններով²⁹, որոնք կազմում են «Ջամբռ»-ի միայն 13-րդ գլուխը: Պետք է նշել նաև, որ այս ձեռագրում առկա տեղեկությունները ըստ հերթականության նույնական չեն հմր. 978 ձեռագրի գլուխների հետ: Ամփոփելով կարող ենք ասել, որ հմր. 4592 ձեռագիրը թեև «Ջամբռ»-ի ընդամենը մի փոքր մասն է կազմում, այդուհանդերձ՝ այն կարևոր է բնագրի հետ համեմատություններ և ճշգրտումներ կատարելու համար: Սիմեոն Երևանցու «Ջամբռ»-ը պատմական և աղբյուրագիտական կարևոր նշանակությամբ հանդերձ՝ աչքի է ընկնում նաև իր ուրույն լեզվով: Մասնագետների մոտավոր հաշվարկներով՝ «Ջամբռ»-ը պարունակում է ավելի քան երեք հարյուր նորակազմ բառեր³⁰, որոնք կարող են հանդիսանալ բառարանագրման կարևոր աղբյուր:

Հինգերորդ ենթագլխում՝ «Ջամբռ»-ի հրատարակությունները և թարգմանությունները, ներկայացված են երկի հայերեն, ռուսերեն և անգլերեն թարգմանությունների համառոտ բնութագրերը ու դրանց գիտական նշանակությունը: Գևորգ Դ (1866–1882) կաթողիկոսի նախաձեռնած տպագրական գործունեության շնորհիվ Էջմիածնի տպարանում լույս են ընծայվում մի շարք հայ պատմիչների գործեր, որոնց թվում և «Ջամբռ»-ը: Բնագրի այս հրատարակությունը կատարված է խնամքով, սակայն հասկանալի

²⁹ Տե՛ս ՄՄ, ձեռ. հմր. 4592, 1ա-15ա (դատարկ՝ 3բ)

³⁰ Համբարձումյան Վ. Գ., Սիմեոն կաթողիկոս Երևանցու «Ջամբռ» երկի բառապաշարը, Էջմիածին, 2006, հմր. Ե, էջ 43:

պատճառներով հնարավոր չի եղել խուսափել նաև վրիպումներից և անճշտություններից: Թեև հրատարակիչները որոշ տեղերում հավելել են մեկնություններ և բացատրություններ, սակայն պետք է հաշվի առնել այն փաստը, որ «Ջամբռ»-ում մեծ թիվ են կազմում օտարալեզու փոխառությունները, տեղանունները և բառակազմությունները: Այս պարագայում, բնական է, դրանք կարիք ունեն ավելի հիմնավոր բացատրությունների և ծանոթագրման: Ակնհայտ է, որ հրատարակիչները, ըստ երևույթին, ուշադրություն չեն դարձրել «Ջամբռ»-ի մյուս՝ հմր. 4592 ձեռագրին, մինչդեռ երկու բնագրերի համեմատությունը կօգներ որոշ ճշգրտումներ անելուն:

«Ջամբռ»-ի ռուսերեն թարգմանությունը լույս է տեսել 1958 թ.-ին Մոսկվայում³¹: Այն կատարել է բազմալաստակ գիտնական, ակադեմիկոս Ստ. Մալխասյանցը՝ 1935-40 թթ.-ին: Թարգմանությունը լույս է տեսել հրատարակչի ընդարձակ առաջաբանով և ծանոթագրություններով, որտեղ մանրամասնությամբ քննության են առնված պատմական, տնտեսական, հողային սեփականության, հարկային պարտավորությունների և այլ բնույթի բազմաթիվ հարցեր:

2003 թ.-ին լույս է տեսել «Ջամբռ»-ի աշխարհաբար թարգմանությունը³²: Այն կատարել է Վ. Համբարձումյանը: Թարգմանությունը լույս է տեսել պատմաաշխարհագրական բնույթի ծանոթագրություններով և քարտեզներով, որոնց հեղինակն է Գ. Բադալյանը: Ծանոթագրությունները տարանջատված են ըստ գլուխների: Ցավալի է, որ բացատրությունների այս՝ առանց այդ էլ բարդացված համակարգը, ըստ երևույթին, զուտ տեխնիկական պատճառներով անհամապատասխանությունների է հանգեցրել, քանի որ տեքստում բառերի վրա նշված թվահամարը չի համապատասխանում ծանոթագրությանը: Այսինքն՝ դրանց համարները հաջորդական են դրված, որի պատճառով երկու մասից բաղկացած ծանոթագրությունների համարները խառնվել են: Այս խնդիրն առկա է մինչև 7-րդ գլուխը: Ցավոք՝ թերի են նաև այս հրատարակության անվանացանկերը (տեղանուններ, անձնանուններ, տերմիններ), որտեղ անունները չեն համապատասխանում նշված էջերին:

«Ջամբռ» երկը թարգմանվել է նաև անգլերեն՝ 2009 թ.-ի³³: Թարգմանությունը կատարել է Զ. Բուտնոյանը: Նա հեղինակել է ծավալուն առաջաբան, որտեղ

³¹ St'ya Симеон Ереванци, Джамбр, памятная книга зерцало и сборник всех обстоятельств святого престола Эчмиадзина и крестных монастырей, перевод С. С. Малхасянца, под редакцией и с предисловием П. Т. Арютюняна, примечания С. С. Малхасянца и П. Т. Арютюняна, Москва, 1958.

³² St'ya Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Ջամբռ (թարգմանությունը, առաջաբանը, ծանոթագրությունները Վ. Համբարձումյանի, պատմաաշխարհագրական բնույթի ծանոթագրությունները և քարտեզները՝ Գ. Բադալյանի), Երևան, 2003:

³³ St'ya Kat'oghikos Simēon of Erevan, Jambr (Archival Chamber), Introduction and Annotated Translation by Georger A. Bournoutian, Costa Mesa, California, 2009.

մասնավորապես խոսվում է Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսի և նրա հեղինակած երկի մասին, նաև ընդարձակ անդրադարձ է կատարել Հայաստանում օտար տիրապետության հաստատման, երկրի բաժանման և Էջմիածնի վիճակի հարցերի վերաբերյալ:

Երկրորդ գլուխը՝ «ՋԱՄԲՈՒ»-Ը ՈՐՊԵՍ ՍԻՄԵՈՆ ԵՐԵՎԱՆՑՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Շինարարական գործունեությունը», անդրադարձ է կատարվել Սիմեոն Երևանցու կաթողիկոսության շրջանում վերջինիս ծավալած շինարարական ակտիվ գործունեությանը՝ համադրությամբ «Ջամբո»-ի հաղորդած տեղեկությունների հետ: Նրա նախաձեռնած շինարարական կարևոր ձեռնարկումների՝ պարսպաշինության, Մայր Տաճարի տանիքի նորոգման, Ս. Գայանե, Ս. Հռիփսիմե վանքերում կատարված շինարարական աշխատանքների, Ս. Էջմիածնում ստորգետնյա ջրերի հեռացման համակարգի և տնտեսական բնույթի այլ շինությունների կառուցման վերաբերյալ «Ջամբո»-ի տեղեկությունները համադրվել են վիմագիր արձանագրությունների և արխիվային վավերագրերի հետ, ինչը հնարավորություն է տվել ամբողջացնել կաթողիկոսի ձեռնարկումների ընդհանուր պատկերը:

Երկրորդ ենթագլխում՝ «Գրատպության հիմնադրումն Էջմիածնում», ճշգրտվել են Ս. Էջմիածնում տպարանի հիմնադրման, առաջին հրատարակություններին վերաբերող մի շարք հարցեր: Սիմեոն Երևանցու այս ձեռնարկումը հիրավի բացառիկ էր, ինչը Լեոն բնորոշում է որպես մի գործ, որը «մինչև այժմ էլ հայոց երկրում դեռ տեսնված չէ»³⁴: Գրատպության հիմնադրումը Հայաստանում, անշուշտ, կարևորագույն իրադարձություն էր հայ մշակութային կյանքում, իսկ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի այս նախաձեռնությունը՝ լուսավորչական մտքի փայլուն մի դրսևորում: Տպարանի հիմնադրման աշխատանքների վերաբերյալ կաթողիկոսը որոշակի մանրամասներ է հաղորդում տպագրված գրքերի հիշատակարաններում՝ շարունակելով հայ ձեռագիր և հնատիպ գրքերի՝ հիշատակարաններ վարելու ավանդույթը: Էջմիածնում տպագրական գործը և տպագրության աշխատանքները սկսելուն խոչընդոտել են բազմաթիվ հանգամանքներ, այդ թվում և քաղաքական: Դա է վկայում առաջին տպագրություն համարվող «Զբօսարան»-ի հիշատակարանը: Մասնավորապես խոսվում է այն մասին, որ «...ի ՌՄԺԷ (1768 թ.) հայոցս թուոջ, սկսաւ մեծ պատերազմ ծնանիլ ի մէջ երկուց մեծամեծ Թագաւորացն. և տևեց մինչև ի թիւս մեր ՌՄԻԱ (1772 թ.) յուրումեմք այժմ»³⁵: Հիշատակարանի այս կարևոր հաղորդման վերաբերյալ պետք է ճշգրտում անել: Այստեղ խոսքը Հերակլ II-ի՝ Երևան կատարած արշավանքների մասին չէ, ինչպես որ ընդունված

³⁴ Լեո, Հայկական տպագրութիւն, հատոր երկրորդ, XVIII դար, առաջին մաս, Թիֆլիս, 1902, էջ 574:

³⁵ Սիմեոն Երեւանցի, Գիրք աղօթից, որ կոչի Զբօսարան հոգեւոր, Էջմիածին, 1772, էջ 174:

է կարծել³⁶, այլ Ռուսական և Օսմանյան կայսրությունների միջև տեղի ունեցած պատերազմի³⁷: Քանի որ մեզ հայտնի է, որ վրաց թագավորը 1760-ական թթ. երկու անգամ է արշավել Երևանի խանություն՝ 1765 և 1769 թթ. և երկու դեպքում էլ, ըստ «Ջամբռ»-ի, թեև ակտիվ պատերազմական գործողություններ չեն մղվել³⁸, այդուհանդերձ՝ վրացական կողմը հաղթող է դուրս եկել: Դա հաստատում են նաև վրացական աղբյուրները³⁹: Հետևաբար՝ պետք է եզրակացնել, որ «Զբոսարան»-ի հիշատակարանում նշված է ռուս-թուրքական 1768-74 թթ. պատերազմի մասին, առավել ևս, որ խոսվում է «երկուց մեծամեծ Թագաւորացն»-ի մասին: Բացի դա՝ գիտենք, որ Կովկասյան ճակատում ռազմական գործողությունները դադարել են հենց 1772 թ.-ին⁴⁰: Փաստորեն՝ այս ծանր վիճակը՝ այդ թվում նաև, ըստ երևույթին, հաղորդակցման խափանումը և ֆինանսական դժվարությունները, զգալիորեն դանդաղեցրել են տպագրական գործը սկսելու աշխատանքներն էջմիածնում:

Երրորդ ենթագլխում՝ «Վանական տնտեսություններն Արևելյան Հայաստանում», ցույց է տրված «Ջամբռ»-ի հաղորդած տնտեսական բնույթի տեղեկությունների կարևորությունը՝ այդ թվում նաև վանական տնտեսություններին վերաբերող: Սիմեոն Երևանցու կաթողիկոսության շրջանում Ս. Էջմիածինը շարունակում էր օգտվել այսպես կոչված մաղաֆության⁴¹ իրավունքից: Այս հանգամանքը, սակայն, հաստատապես ամրագրված չի եղել Էջմիածնի համար: Ըստ էության ազատված լինելով պարսից արքունիքին հարկ վճարելուց⁴², այնուհանդերձ կաթողիկոսները ստիպված էին ժամանակ առ ժամանակ պարսից պաշտոնյաներին՝ այդ թվում խաներին, պատվել և նվերներ ուղարկել՝ տարբեր տոների կապակցությամբ⁴³:

Այս վիճակը հաճախակի էր փոփոխվում՝ պայմանավորված կաթողիկոսների անձով և գործունեությամբ կամ պարսից շահերի վերաբերմունքով: Սիմեոն

³⁶ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն (XIV-XVIII դդ.), Երևան, 1972, էջ 623: Իշխանյան Ռ. Ա., Հայ գիրքը 1512-1920 թթ., Երևան, 1981, էջ 94:

³⁷ Խոսքը 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի մասին է:

³⁸ Տե՛ս Ջամբռ, էջ 43:

³⁹ «[Էրեկլե] բատոնը ուղևորվեց Երևան. [վրացիներս] քյուրդերին ավերեցինք և անվնաս վերադարձանք...»: Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, քաղվածքներ վրացերեն բնագրից հայերեն թարգմանությամբ, առաջաբանով, ներածություններով և ծանոթագրություններով Մելիքսեթ-Բեկ Լ. Մ., հատոր Գ (ԺԸ-ԺԺ դդ.), Երևան, 1955, էջ 164:

⁴⁰ Маркова О.П., Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, Москва, 1966, էջ 140;

⁴¹ Հարկային իմունիտետ, ազատում բոլոր տեսակի պետական հարկերից:

⁴² Բացառություն էր կազմում որոշակի գումարի մուծումը, որը համարվում էր Էջմիածնի մաղաֆության ավելցուկի հարկը:

⁴³ Տե՛ս Ջամբռ, էջ 151:

Երևանցին հանգամանալից անդրադարձել է Էջմիածնի մաղաֆության իրավունքին՝ այն դիտարկելով որպես Էջմիածնի պատմական իրավունք, որն ամրագրվել և բազմիցս վերահաստատվել է պարսից շահերի կողմից

Երրորդ գլուխը՝ «ՋԱՄԲՈՒ»-Ի ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Փոխհարաբերությունների հաստատումը Ռուսական կայսրության հետ», վերլուծության է ենթարկված Ռուսական կայսրության և Ս. Էջմիածնի միջև փոխհարաբերությունների հաստատման հարցը՝ համադրված խնդրի վերաբերյալ «Ջամբո»-ում առկա աղբյուրագիտական տեղեկությունների հետ: Ռուսական պետության հետ փոխհարաբերություններ հաստատելու գործում Սիմեոն Երևանցու ջանքերը ոչ միայն հաջողվում են, այլև, ինչպես «Ջամբո»-ում է նշված՝ Եկատերինա II կայսրուհին «լիովին և քան զխնդրեալն առաւել կատարէ զխնդիրն»⁴⁴: Այս համատեքստում աղբյուրագիտական տեսանկյունից ուշագրավ են «Ջամբո»-ի այն տվյալները, որոնց հիման վրա պատկերացում ենք կազմում ռուսահայոց թեմի (նվիրականության) վերաբերյալ: Մասնավորապես՝ 1765 թ. Սիմեոն Երևանցու կողմից կանոնակարգված հայկական թեմերի ցանկում հստակորեն առանձնացված է Ռուսաստանյան թեմը. «*Հաշտարխան որ է Տէրունի. ի Կիրահանամ եւ ի Կայսրեապետն մայրաքաղաքդ Պետրպոլք. ի Մոսկով. ի Հաշտարխան. ի Ղզլար*⁴⁵. ի Սառաֆան. ի Բորաղան. ի Չերքեզ. եւ այլ շրջակայ...»⁴⁶: «Ջամբո»-ի ձեռագրում ևս պատկերը գրեթե նույնն է, սակայն մի շարք կարևոր հավելումներով. «*Հաշտարխան քաղաքն: ընդ որով են և տքա: Պետրպոլք. Մոսկով. Ղզլար. Սառաֆան. Բորաղան. Չերքեզ. Մոզդուք. և նորոգ շինէալ Նոր Նախիջևան և Գրիգորիպոլ. և նորոգ ստացեալ ի յՕսմանցոց՝ Ղոխմ*⁴⁷ *կոչեցեալն իւրով ամենայն սահմանօքն, այսինքնէ՝ Քէֆէ, Էսկի Ղրիմ, Ղարասու, Աղմեջիք, Գէօզլով, Բաղչասարայ, և Օրբազար*»⁴⁸: Սակայն, ինչպես գիտենք, Նոր

⁴⁴ Ջամբո, էջ 40:

⁴⁵ Հայ վաճառականների մասին, որոնք հաստատվել էին Հյուսիսային Կովկասում, Թերեքի ավազանում, հիշատակություններ կան 18-րդ դարի 20-30-ական թթ.-ից: Տե՛ս Պողոսյան Լ., Հայկական գաղթավայրերի առևտրատնտեսական կյանքի պատմությունից (Ղզլար և Մոզդուկ, XVIII դար—XIX դարի առաջին կես), *Պատմա-բանասիրական հանդես*, 1986, № 1, էջ 85-96:

⁴⁶ ՄՄ, ձեռ. հմր. 9120, 2բ:

⁴⁷ 1744 թ.-ի դրությամբ թվարկված բոլոր բնակավայրերը հիշատակվում են որպես հայաբնակ: Տե՛ս Միքայելյան Վ., Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1964, էջ 112:

⁴⁸ ՄՄ, ձեռ. հմր. 978, 162բ:

Նախիջևանը հիմնադրվել է միայն 1779 թ.-ին, Գրիգորիոսյուն՝ 1792 թ.-ին⁴⁹: Ուստի՝ «Ջամբո»-ի հաղորդած այս կարևոր տեղեկությունը պետք է վերագրել ավելի ուշ ժամանակաշրջանի, առավել ևս, որ բնագրի այդ տեքստի համեմատումն ակնհայտ է դարձնում, որ տվյալ հավելումն այլ գրչի կողմից է և, ըստ երևույթին, արդեն հետագայում է կատարվել⁵⁰:

Երկրորդ ենթագլխում՝ «Կաթոլիկության հետ կապված խնդիրները», քննվել է Սիմեոն կաթողիկոսի անդրադարձը հայ կաթոլիկներին (հեղինակը նրանց անվանում է «*ախթարմայք*»⁵¹) և կաթոլիկության խնդրին, որը ներկայացված է հիմնականում Ախալցխայի օրինակով: Ինչպես երևում է՝ Սիմեոն կաթողիկոսի պայքարը կաթոլիկների դեմ տևական է եղել և միանգամից չի հաջողվել: Դա են վկայում օսմանյան Մուստաֆա III սուլթանից (1757-1774) ստացված հրամանագրերը և «Ջամբո»-ի հաղորդած աղբյուրագիտական տեղեկությունները:

Երրորդ ենթագլխում՝ «Ջամբո»-ը որպես Ս. Էջմիածնի և հայոց մյուս կաթողիկոսությունների փոխհարաբերությունների սկզբնաղբյուր», վերլուծության է ենթարկված Հայոց ընդհանրական աթոռի՝ Ս. Էջմիածնի, և մյուս կաթողիկոսությունների՝ Գանձասարի (Աղվանից), Աղթամարի և Սսի (Կիլիկիո) փոխհարաբերությունների ուսումնասիրման խնդիրը ըստ «Ջամբո»-ի աղբյուրագիտական տեղեկությունների: Երկու կաթողիկոսությունների XVII-XVIII դարերի փոխհարաբերությունների կարևոր դրվագներից են գերագահության և եկեղեցական թեմերի պատկանելիության հարցերը:

Ըստ այդմ՝ Սիմեոն Երևանցին «Ջամբո»-ում առաջնային կարևորություն է տալիս Գանձասարի կաթողիկոսությանը: Այն, ըստ հեղինակի, թեև հիմնվել էր դեռևս Գրիգոր Լուսավորչի օրոք, բայց Գանձասարի կաթողիկոսները, որոնց նա կոչում էր «Լուսաւորչի փոխանորդ Կաթողիկոսաց որդի և թոռն», պետք է օժվելին և կաթողիկոսական կարգ ստանային Էջմիածնի կաթողիկոսների կողմից⁵²: Այս առումով ուշագրավ է «Ջամբո»-ի այն տեղեկությունը, որ 1634 թ.-ին «Ժողովորդքն Խաչենու և բոլոր վիճակքն Աղուանից» դիմում են պարսից Շահ Սեֆիին (1629-1642)՝ հայտնելով, թե իրենք «ի բնէ» հանդիսացել են Էջմիածնի վիճակներ և չեն ցանկանում ենթարկվել Գանձասարի կաթողիկոսին և շահը բավարարում է նրանց խնդրանքը⁵³: Ս. Երևանցու այս հաղորդումը կարիք ունի

⁴⁹ Տե՛ս Բարխուդարյան Վ. Բ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779-1861 թթ.), Երևան, 1967, էջ 69:

⁵⁰ Տե՛ս ՄՄ, ձեռ. հմր. 978, 162բ:

⁵¹ Համարվում է փոխառություն թուրքերենից, որը նշանակում է «ուրացութիւն»: Տե՛ս Դիան հայոց պատմութեան, Գիրք Գ, էջ 828: Հ. Աճառյանը տալիս է բառի բացատրությունը՝ «կաթոլիկ հայ»: Տե՛ս Աճառյան Հր., Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 275:

⁵² Ջամբո, էջ 65

⁵³ Նույն տեղում, էջ 79:

ճշգրտման, քանի որ եթե հավատանք այս վկայությանը, ապա ստացվում է հակասություն՝ նախ Էջմիածնի կամքով ընտրվում է Գանձասարի կաթողիկոսը, ապա ընտրությունից անմիջապես հետո Արցախի թեմերի ժողովուրդը ցանկանում է «կրկին» ենթարկվել Էջմիածնին: Այս հարցին անդադարձաժ հեղինակները⁵⁴ հիմնվում են «Ջամբռ»-ի հաղորդած սույն տեղեկության վրա և, հղելով Մատենադարանում պահվող մի արխիվային վավերագրի, նշում են, որ «Աղվանից կաթողիկոսությունն այնքան էր թուլացած», որ Փիլիպոս Ա Աղբակեցուն (1633–1655) հաջողվեց ձեռք բերել նրա տիրույթները⁵⁵: Նշենք որ Մատենադարանում պահվող տվյալ վավերագիրը⁵⁶ Շահ Սեֆիի հրովարտակն է, որը վերաբերում է բացառապես Քաջաթաղի շրջանի հայ բնակչությանն Էջմիածնին ենթարկելուն⁵⁷, իսկ արխիվային վավերագրի վրա առկա են Սիմեոն Երևանցու կատարած գրառումները, որոնք էլ, ըստ երևույթին, առաջացրել են այս շփոթը:

Երկու կաթողիկոսությունների հետագա փոխհարաբերությունները արդեն պայմանավորված էին Գանձասարի հակաթոռ կաթողիկոսների հաշտեցման խնդրի հետ, ինչի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ ունի «Ջամբռ»-ը, որոնք շատ դեպքերում բացառիկ են:

«Ջամբռ»-ի հաղորդումներն Աղթամարի և Էջմիածնի փոխհարաբերությունների վերաբերյալ հիմնված են օսմանյան իշխողների հրամանագրերի վրա, որոնցով հաստատվում կամ փոփոխվում էր հայկական թեմերից հանգանակություններ հավաքելու վիճակը կամ տարածքները: Ինչպես նշում է Սիմեոն կաթողիկոսը, հայոց եկեղեցու որոշ թեմեր «գալթեցին յԱղթամար նստողքն՝ Տաճկական իշխանութեամբ»⁵⁸, մինչդեռ արդեն իր հայրապետության տարիներին նրան հաջողվել է կանոնակարգել նաև Արևմտյան Հայաստանի թեմերը, որոնց թվում նշվում է Էրզրումը (Կարին), Տիգրանակերտը (Դիարբեքիր), Վանը, Բայազետը, Կարսը և շրջակա բնակավայրերը⁵⁹:

Սիմեոն Երևանցու երկում ներկայացված օսմանյան սուլթանների բազմաթիվ ֆերմանները, հրովարտակները եզակի բնույթի սկզբնաղբյուր են տվյալ ժամանակահատվածում Օսմանյան կայսրության և Հայ Առաքելական եկեղեցու փոխհարաբերությունների ուսումնասիրման համար, և նաև՝ Աղթամարի կաթողիկոսության պատմության տեսանկյունից:

⁵⁴ Տե՛ս Բարխուտարեանց Մ., Պատմութիւն Աղուանից, Բ. հատոր, Թիֆլիս, 1907, էջ 65, Զամինեան Ա., Հայոց եկեղեցու պատմութիւն, Բ. մասն, Նոր Նախիջևան, 1909, էջ 70: Մկրտումյան Լ., Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII-XIX դդ., Երևան, 2006, էջ 59 և այլն:

⁵⁵ Տե՛ս Մկրտումյան Լ., նշվ. աշխ., էջ 59:

⁵⁶ Տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ա, վավ. 57:

⁵⁷ Տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, պրակ երկրորդ, էջ 109, վավ. 22:

⁵⁸ Ջամբռ, էջ 44:

⁵⁹ Տե՛ս ՄՄ, ձեռ. հմր. 9120, 2աբ:

Ընդհանուր առմամբ, մեր տեղեկություններն Էջմիածնի և Կիլիկիո աթոռների XVII-XVIII դդ. փոխհարաբերությունների պատմության վերաբերյալ սուղ են և այս առումով «Ջամբռ»-ը սկզբնաղբյուրային կարևոր լրացումներ է կատարում: Հետագա ժամանակաշրջանի կապակցությամբ Սիմեոն Երևանցու «Ջամբռ»-ն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում, որոնք հնարավորություն են տալիս պատկերացում կազմել Ղազար Ա Ջահկեցու (1737-1751) կաթողիկոսության շրջանում Կիլիկիո կաթողիկոսության և Կ. Պոլսի պատրիարքության միջև առաջացած հակասությունների վերաբերյալ: Գիտենք, որ այս դեպքում ևս հիմնական խնդիրը կապված էր թեմերի պատկանելության հարցի հետ⁶⁰:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ի մի են բերվել ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրակացությունները:

1. Սիմեոն Երևանցու «Ջամբռ»-ը հայ պատմագրության բացառիկ գործերից է, որը շահեկանորեն տարբերվում է հայ պատմագրության մյուս երկերից, առաջին հերթին՝ բազմաթիվ աղբյուրների և արխիվային վավերագրերի օգտագործմամբ: Պետականության բացակայության պայմաններում այն նախատեսված է եղել ծառայելու հայության հոգևոր կենտրոն Էջմիածնի տնտեսական, իրավական և մշակութային դիրքերի պահպանման և ամրապնդման գործին:

2. «Ջամբռ»-ի ուսումնասիրության համատեքստում ի մի բերելով Սիմեոն Երևանցու հարուստ մատենագրական և ձեռագրական ժառանգությունը, որը ոչ միայն իր ժամանակաշրջանի համար է կարևորվել, այլև՝ հետագայում բազմիցս ընդօրինակվել է, որի արդյունքում հեղինակի գործերի ձեռագրերի թիվը՝ ընդօրինակություններով հանդերձ, անցնում է հարյուրից (ցանկերը տե՛ս «Հավելված»-ում):

3. Սիմեոն Երևանցու կողմից «Ջամբռ»-ի ստեղծման հանգամանքները պայմանավորված են եղել ժամանակաշրջանի քաղաքական իրողություններով: Հեղինակը՝ գտնվելով տարածաշրջանային իրադարձությունների կենտրոնում, «Ջամբռ»-ի միջոցով ձգտել է ոչ միայն ի հայտ բերել, հիմնավորել և պահպանել Էջմիածնի կարգավիճակը, այլև այն համախմբող կենտրոն դարձնել ամբողջ հայության համար:

4. «Ջամբռ»-ի մաս կազմող և Սիմեոն Երևանցուն վերաբերող հատվածի բնագրական քննությունը և համեմատությունը երկի այլ հատվածների հետ՝ նկատի ունենալով բովանդակային, կառուցվածքային նմանությունները, թույլ է տալիս եզրակացնել, որ դրանք միևնույն գրչի ձեռքին են պատկանում և հետագայի հավելում չեն, ինչպես ենթադրել են որոշ հեղինակներ: Նկատենք նաև, որ Սիմեոն Երևանցու գործունեությունը ներկայացնող այս հատվածը որոշ տարբերություններով հանդերձ, առկա է նաև «Ջամբռ»-ի սևագիրը համարվող, հեղինակի ինքնագիր ձեռագրում (ՄՄ, ձեռ. հմր. 4592):

⁶⁰ Կիլեւէրեան, Բ., Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը), Անթիլիաս, 1939, էջ 495:

5. Մատենադարանում գտնվող «Ջամբռ»-ի ձեռագրերի և Սիմեոն Երևանցու մատենագրական ժառանգության մաս կազմող այլ ձեռագրերի ուսումնասիրությամբ հնարավոր է եղել պարզել «Ջամբռ»-ի ստեղծման ժամանակագրական սահմանները և կատարված բազմաթիվ լրացումների խնդիրները: Ըստ այդմ՝ «Ջամբռ»-ը գրվել է 1765-1775 թթ.-ին, և հիմնականում լրացվել է 1765-1768 թթ.-ին: Բնագրի համեմատական վերլուծությունից երևում է, որ «Ջամբռ»-ում հետագայում ևս կատարվել են լրացումներ՝ մասնավորապես 1779, 1792 թթ.-ից հետո, հիշատակվում են նաև 1803, 1828 թվականները և այլն: Այդպիսով՝ թեև կատարված լրացումները քիչ են, այդուհանդերձ վկայում են այն մասին, որ «Ջամբռ»-ը միջամտությունների է ենթարկվել մինչև հրատարակվելը:

6. «Ջամբռ»-ի քննության արդյունքում, հաշվի առնելով նաև հեղինակի հաղորդումները, բացահայտվել են Սիմեոն Երևանցու օգտագործած աղբյուրները, որոնք պայմանականորեն բաժանել ենք երկու խմբի՝ հայ պատմիչների երկեր (Մովսես Կաղանկատվացի, Ուխտատնէս եպիսկոպոս, Անանիա Մոկացի, Մատթեոս Ուռհայեցի, Կիրակոս Գանձակեցի, Թովմա Մեծոփացի, Առաքել Դավրիժեցի, Զաքարիա Քանաքեռցի) և արխիվային վավերագրեր (որոնք են՝ հայերեն, պարսկերեն, օսմաներեն, վրացերեն): Հեղինակը հայթայթել, կանոնակարգել և իր աշխատության մեջ օգտագործել է բազմաթիվ հրամանագրեր, կալվածագրեր և տնտեսական բնույթի այլ փաստաթղթեր: Դրանց մի մասն այսօր գտնվում են Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում, սակայն շատ դեպքերում բացառիկ են, քանի որ բնօրինակներով չեն պահպանվել:

7. Ուսումնասիրության ընթացքում՝ «Ջամբռ»-ի հրատարակության և Մատենադարանում պահվող ձեռագրերի (ՄՄ հմր. 978, 4592,) համեմատության շնորհիվ ի հայտ են եկել հրատարակությունից դուրս մնացած որոշ փոքր հատվածներ: Բացի այդ՝ 1873 թ.-ին կազմված «Ջամբռ»-ի բնագիրը կարիք ունի ճշգրտումների և շտկումների, ինչը հիմք է տալիս մտածելու քննական նոր բնագիր կազմելու մասին:

8. Սիմեոն Երևանցու «Ջամբռ»-ը կարևոր սկզբնաղբյուր է հենց իր՝ կաթողիկոսի ժամանակաշրջանի ուսումնասիրման հարցում, փաստագրական արժանահավատ և հարուստ նյութեր է պարունակում՝ որոշ դեպքերում բացառիկ: Պատահական չէ, որ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի գործունեությանն անդրադարձած հեղինակները մշտապես հենվել են «Ջամբռ»-ի վրա՝ թեպետ երբեմն հասնելով ծայրահեղության՝ տեղեկությունները չքննելով և չհամադրելով այլ աղբյուրների հետ: «Ջամբռ»-ն արժեքավոր աղբյուր է Սիմեոն Երևանցու շինարարական, լուսավորչական, մշակութային և տնտեսական գործունեությանը վերաբերող ամենատարբեր հարցերի լուսաբանման առումով:

9. Օտար տիրապետության պայմաններում «Ջամբռ»-ի հաղորդած տեղեկությունները հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու տվյալ ժամանակաշրջանի տնտեսական, իրավական, հարկային և այլ բնույթի

բազմաթիվ իրողությունների վերաբերյալ: «Ջամբռ»-ի տնտեսական բնույթի հաղորդումները շատ դեպքերում բացառիկ են՝ թեև հիմնականում վերաբերում են վանական տնտեսություններին:

10. Հայ-ռուսական փոխհարաբերությունների հաստատման վերաբերյալ չափազանց արժեքավոր են «Ջամբռ»-ում առկա վկայությունները: Դրանք հիմք են տալիս որոշ փաստագրական լրացումներ կատարել՝ մասնավորապես կապված Աստրախանի թեմի հաստատման և գործունեության հետ:

11. Հայ պատմագրության զգալուն ոլորտ է համարվում Հայ Առաքելական եկեղեցուն և դավանական այլ ուղղությունների հետևող հայության հատվածների հարաբերությունների խնդիրը: Սիմեոն Երևանցին ակտիվորեն պայքարել է իր պատկերացմամբ հայության կենտրոն հանդիսացող Էջմիածնից հոգևոր առումով հեռացած հայության դեմ՝ նպատակ ունենալով դադարեցնել այլադավանության տարածումը: Այս հարցում ևս «Ջամբռ»-ը կարևոր տեղեկություններ է պահպանել՝ հատկապես այդ պայքարում օսմանյան իշխանությունների ներգրավման և մասնավորապես Արևմտյան Հայաստանում կաթոլիկ գործիչների գործունեության խոչընդոտման վերաբերյալ:

12. Սիմեոն Երևանցու «Ջամբռ»-ը կարևոր սկզբնաղբյուր է նաև Էջմիածնի և հայոց մյուս կաթողիկոսությունների՝ Գանձասարի, Աղթամարի և Սսի փոխհարաբերությունների պատմության վերաբերյալ: Հատկապես լարված են եղել Էջմիածնի և Գանձասարի հարաբերությունները, որոնք Սիմեոն կաթողիկոսի ջանքերով հանգուցալուծվել են Էջմիածնի գերագահության պահպանմամբ: Լինելով դեպքերի ականատեսն ու մասնակիցը՝ Սիմեոն Երևանցին «Ջամբռ»-ում ներկայացրել է նաև մյուս աթոռների հետ առկա խնդիրների լուծման իր տեսլականը:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Սիմեոն Երևանցու գործունեությունը մինչև կաթողիկոս ընտրվելը ըստ «Ջամբռ» երկի, *Բանբեր Մալոբենադարանի*, №22, Երևան, 2015, էջ 228-238:
2. Վանական տնտեսություններն Արեւելյան Հայաստանում ԺԸ. դարում (ըստ Սիմեոն Երևանցու «Ջամբռ» աշխատության), *Էջմիածին*, հմր. Ժ, 2015, էջ 46-57:
3. Սիմեոն Երևանցու «Ջամբռը» որպես Ս. Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսությունների փոխհարաբերությունների պատմության սկզբնաղբյուր, *Պատմություն և մշակույթ*, Երևան, 2016, էջ 285-296:
4. Ս. Էջմիածնի և Ռուսական կայսրության փոխհարաբերություններն ըստ Սիմեոն Ա Երևանցու «Ջամբռի», *Էջմիածին*, հմր. Բ, 2017, էջ 116-127:

ОГАНЯН ГРАНТ РУДИКОВИЧ

«ДЖАМБР» СИМЕОНА ЕРЕВАНЦИ КАК ПЕРВОИСТОЧНИК ПО ИЗУЧЕНИЮ АРМЯНСКОЙ ИСТОРИИ XVII-XVIII ВВ.»

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.05 «Историография, источниковедение».

Защита состоится 23-го декабря 2016 г., в 14⁰⁰ на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. М. Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Данное исследование посвящено источниковедческому изучению «Джамбра», автором которого является один из ярких представителей армянской историографии Симеон Ереванци (год рож. 1710, католикос - 1763-1780).

Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованных источников и литературы. Во введении обоснованы важность и актуальность исследования, научная новизна работы. Далее указаны цели и задачи, поставленные перед автором, а так же хронологические рамки исследования, проанализированы использованные источники и литература.

В первой главе – «Симеон Ереванци и его «Джамбр», изложены основные эпизоды жизни и деятельности Симеона Ереванци. Эти данные сопоставлены со сведениями из самого «Джамбра», что позволило сделать некоторые дополнения к известному по этому вопросу доселе. Также выявлены обстоятельства создания «Джамбра», период его написания и вопрос о его дальнейших дополнениях. В этой же главе истолкованы основные источники «Джамбра», которыми являются работы армянских средневековых историков и архивные документы (на армянском, персидском и др. языках). Взвешены и исследованы сохранившиеся рукописи «Джамбра», их структурные особенности. Обсужден также вопрос относительно языка и межъязыковых заимствований в «Джамбре». В конце главы приводится краткое описание публикаций «Джамбра» на армянском, русском и английском языках и их научное значение.

Во второй главе - «Джамбр», как первоисточник деятельности Симеона Ереванци» рассмотрена активная строительная деятельность Симеона Ереванци в период католокосата. Речь идет о изучении важных сведений, содержащихся в «Джамбре», касающихся его инициатив по строительству некоторых важных сооружений, таких как укрепление стен Св. Эчмиадзина, ремонт крыши кафедрального собора, строительные работы в Церквях Святой Гаяне и Рипсима, строительство системы подземного дренажа в Св. Эчмиадзине и конкретные данные о других экономических сооружениях. Эти сведения сопоставлены с данными эпиграфических надписей и архивных документов, что позволило выявить наиболее полный перечень предприятий католкоса. Выяснены также некоторые вопросы основания Симеоном Ереванци типографии в Св. Эчмиадзине, ее историческое значение и некоторые вопросы, касающиеся ее первых публикаций. В той же главе рассмотрено первостепенное значение «Джамбра», как источника по изучению монастырских хозяйств.

В третьей главе - «Сведения, содержащиеся в «Джамбре», касающиеся внешних отношений Св. Эчмиадзина» анализируются вопросы установления взаимоотношений между Российской империей и Св. Эчмиадзином. Согласно упоминаниям «Джамбра», усилия Симеона Ереванци по этому вопросу были более чем успешными. В этом контексте, весьма значимы те сведения «Джамбра», основываясь на которых выявляется четкая картина наших представлений об армянских епархиях в России.

В этой же главе исследован вопрос о позиции Симеона Ереванци относительно армянских католиков и католицизма, который в «Джамбре» представлен, в основном, на примере Ахалциха. В той же главе проведены источниковедческие исследования по истории взаимоотношений между Патриархатом Всех Армян, Св. Эчмиадзином, и другими католкосатами, такими, как Гандзасарский, Ахтамарский и Киликийский. Эти отношения, в основном, были обусловлены выяснением вопроса о верховенстве.

В заключении подведены итоги проведенной работы и изложены основные выводы исследования.

OHANYAN HRANT R.

"JAMBR" WORK OF SIMEON YEREVANTSIS AS THE SOURCE OF
ARMENIAN HISTORY OF XVII-XVIII CENTURIES

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of
«Historiography, Source Study» 07.00.05.

The defense of the dissertation will be held on the 23th of December, 2016, 14⁰⁰ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave. 24/4).

SUMMARY

This study is dedicated to the “Jambr” work’s source analysis of the XVIII century’s prominent representative of Armenian manuscripts Simeon Yerevantsi (born in 1710, Catholicos of All Armenians from 1763 to 1780).

The thesis consists of an introduction, three chapters, conclusions and list of used sources and literature. The importance and relevance of the research, its scientific novelty, the goals and tasks set by the author argued in the introduction, an analyze of used sources and literature is done.

In the first chapter - “Simeon Yerevantsi and his “Jambr” work” are presented the main episodes of Simeon Yerevantsi’s life and activities combined with information of “Jambr”, are also examined the circumstances of the work, the chronological borders and the problems of additions, as well as are identified the sources of work, which are the works of Armenian historians and archival documents (in Armenian and foreign languages). In the same chapter are examined the manuscripts, structural and language features and loan words. There is also a brief reflection on editions and translations of “Jambr”.

There is a reflection on construction activity of the Catholicos Simeon Yerevantsi in the second chapter - “Jambr” as a source of activity of Simeon Yerevantsi”. The information of “Jambr” about his initiated important construction works as building a wall, restoration of Etchmiadzin Cathedral’s roof, constructions in St. Gayane and St. Hripsime monasteries, construction of the underground drainage system of St. Etchmiadzin and the construction of other buildings were compared with the lithograph inscriptions and archival documents, which enabled to complete the list of undertakings of Catholicos. A variety of issues on historical significance and the first publications of St. Etchmiadzin printing house’s foundation by Simeon Yerevantsi were adjusted. In the same chapter is also shown the primary importance of the economical information and monastic farms.

In the third chapter - “The information of “Jambr” about foreign relations of Mother See” is analyzed the question of establishing relations between Mother See and the Russian Empire. The efforts of Simeon Yerevantsi in building a relationship with Russia are largely succeeded. In this context are significant the information of “Jambr” about understanding of the Russian - Armenian Diocese. Is also examined the reflection of Simeon Catholicos on the Armenian Catholics and Catholicism, which is mainly presented in the example of Akhaltsikhe. At the same time is examined the problem of relationship among St. Etchmiadzin and other Catholicosates as Gandzasar, Akhtamar and Sis, which were mainly caused with the issues of supremacy and religious dioceses affiliation.

The results of the undertaken work and the main findings of the study are summarized in the conclusion.